

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի Շամբի միջնակարգ դպրոցի / ՊՈԱԿ/,
<<Աշխարհագրություն>>(8 ժամ),<<Հայ եկեղեցու պատմություն>> (6 ժամ),
<<Հասարակագիտություն>>(4ժամ),),<<Տեխնոլոգիա>> (աղջիկներ՝ 1 ժամ),
<<Տեխնոլոգիա>> (տղաներ՝ 2,5 ժամ),<<Կերպարվեստ>>(1 ժամ) առարկաների թափուր
աշխատատեղերի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ
դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների և մասնագիտական կարողությունների
ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ
նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3X4 չափսի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին
համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք
աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ (առկայության
դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը
հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող
փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:
- Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի
բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները
վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ,
կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի
ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերը ընդունվում են հոկտեմբերի 13-ից մինչև հոկտեմբերի 26-ը ներառյալ,
ամեն օր՝ ժամը՝ 9:00-ից 14:00 –ը, բացի շաբաթ,կիրակի և այլ ոչ աշխատանքային
օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա հոկտեմբերի 28 -ին ժամը 12:00-ին, Սյունիքի մարզի
Շամբի միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել /093 00 59 58/ հեռախոսահամարով: